

ցեր են Գեր. Մկրտիչ պապականին, որուն առաջնորդական բարձր պաշտօնը հաստատուած ըլլալու մասին՝ Գահիրէի ազգային վարչութեան կողմանէ ազգաբարական նամակներ յուղարկուելու տեղական ամեն տեսանկիւն, որոնք անմիջապէս ընդունելու և արձանագրելու են Եգիպտոսի նոր առաջնորդին անունը: Կրտսէի թէ Գահիրէի մէջ ազգային ընդհանուր ժողով մը պիտի գումարուի այս օրերս, որուն նպատակը պիտի ըլլայ նոյն մայրաքաղաքին Հայոց վարժարանը բարեկարգել և զայն աւելի բարգաւաճ վիճակի մը մէջ դնելու միջոցներու վրայօք խորհիլ:

Արշալոյս դեկտ. 20

Կը լսենք թէ Հապէշիսթանու պատերազմի առթիւ Հայոց ազգին առ Անգղիական մեծ ազգն մատուցած ծառայութիւնը փոխարինելու համար՝ Անգղիոյ զենպանատունը մեր պատրիարքարանին հետ անուղղակի բանակցութեան մտած է:

Օրապիր Թիւ 99

Մանգումի մէջ գոհութեամբ կը կարդանք, թէ Եգիպտոսէն Վսեմ Գէորգ պէյ Ռափայէլեան նամակաւ մը Փանոսեան էֆէնտիի իմացուցեր է թէ՝ Աղապեան վարժարանի մը կառուցմանը համար եթէ յարմար է՝ մը գտնելու ըլլայ, ինքն յօժարամիտ է փոխարէնը հատուցանելու:

Այս դարու անմահութիւնը ազգատին ողորմած ըլլալու համար աղքատութեան բարձմանը նպաստելուն մէջ է:

Գէորգ պէյ Ռափայէլեան կրնայ ներկայ դարու անմահ անձանց կարգն անցնիլ իր գործովը, և օրինակ ըլլալ այն կեղծ փառասիրաց ու ըսել թէ՝ փառաւորութիւնը լրագրապետներէն ածական մուրալուն մէջ է, այլ փառաւոր գործ ընելուն մէջ:

Նոյն:

ՆՈՅՒ ԹՈՌԱՆ ԹՈՌՆԵՐ ԶՈՒՆՅՈՒՄԻ ՈՒՅ ՈՒՅ
ՍՈՒՅՈՒՄԵՆ ԺՈՂՈՎԻՄԸ ՄԷՑ:

Մասիսի դեկտեմբ. 27 շարաթաթերթին մէջ Զուիցցերիոյ Ցուրիս քաղաքէն դեկտ. 8 թուական

նով գրուած նամակի մը մէջ կը կարդանք, որ բոլոր Զուիցցերիոյ ուսուցիչները տարին անգամ մը զանազան քաղաքներու մէջ ժողով ընելով իրենց ուսուցչական պաշտօնին, այն է դաստիարակութեան վրայ կը խորհին և կը խօսին եղբր:

Նամակագիրը այս տարի տեղի ունեցած այս տեսակ ժողովներուն մէկ քանիին նկարագրութիւնը կը ընէ:

Գաստիարակութեան մասին յիշեալ նամակին կարեւոր կտորներուն քաղուածն և անոնց վրայ մեր խորհրդածութիւնը, ուրիշ անգամի թողով, այս անգամ յիշեալ նամակին հետեւեալ մասը միայն կը քաղեմք:

"Օգոստոսին մի այլ մանկավարժական ժողովի ներկայ էի, որ Ալինտըրտուր քաղաքի մէջ տեղի ունէր: Այս տեղ միայն Ցիւրիս Կանտօնի դաստիարակներն և ուսուցիչներն էին ժողոված, մօտ 600 հոգի: Այս ժողովին ներկայ էին երկու երիտասարդ Հայեր, որոնք Զուիցցերիոյ մէջ կուսանին, ժողովի ծանր բովանդակութիւնը մի կողմը թողնելով, միայն հասարակաց հացկերութենէ մի անցք կը ցանկամ յիշել ի հրապարակ և ի քաջալերութիւն հայրենակցացս:

"Հացկերութեան ժամանակ զանազան համառօտ ճառեր կը խօսային և կենացներ կը պարպէին: Մէկը բաւական երկար սկսաւ Նոյի վրայ խօսալ զուարճարանութեամբ և քանի մի անգամ Հայաստան յիշեց, ուր Նոյ այն պատուական հիւրը (զինին) հնարել է, որ ուսուցիչները մխիթարութիւնն է և ընէ: Այս զուարճալի խօսքերէն յետոյ յարմար էր որ Հայն ևս իր ձայնը բազմութեան մէջ լսելի անի: Այսպէս ալ եղաւ: Նախագահէն հրաման առնելով յանուն Նոյի, որի թողան թողնելը իրենց մէջ կը դաստիարակուին ու կը զարգանան, շնորհակալութիւն արաւ Զուիցցերիայի դաստիարակներէն, և մի երկու խօսքով յիշելով նոցա մարդասիրական վարմունքը օտարականների հետ՝ պարպեց իր բաժակը հանդիսականների կենացը:

"Մեծ տպաւորութիւն արաւ այս ամենի վրայ մանաւանդ որ չը գիտէին ընդհանրապէս որ Հայեր ևս կարող էին լինել իրենց մէջ և ամենքը կը ցանկային Հայերին տեսնել և իրենց բաժակով նոցա բաժակին զարկել:—Ետգործի դպրոցի զիրենկօրը այնչափ ոգևորուեցաւ, որ տեղէն բարձրանալով կա-